

Հայկական պղինձը

1600 - 1915 թթ.

ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Պղինձը (1), որուն յայտնաբերումը կատարուած է մարդկային քաղաքակրթութեան հնագոյն հանգրուաններուն, եղած է, ու ցարդ կը մնայ ամենէն աւելի օգտագործելի մետաղներէն մէկը: Դիւրաթեք, գորշ կարմիր գոյնով այս մետաղը մեծապէս օգտագործուած է նաեւ Պատմական Հայաստանի սահմաններուն մէջ, ուր մետաղագործութեան ու արհեստներու զարգացման զուգընթաց, պղնձագործութիւնն ալ ապրած է իր ուրոյն կեանքը, իր ներկայութիւնը պարտադրելով հաւաքական ու անհատական կեանքի տարբեր բնագաւառներուն մէջ:

Պղնձագործութիւնը միջնադարու մէջ նկատուած է «կարեւոր ու յարգի» արհեստներէն մէկը: Պղնձագործը նկատուած է «հաւատացեալ մարդ ու չարչարկոտ», ինչ որ կը վկայէ թէ վերոյիշեալ արհեստը կապուած էր բազմաթիւ դժուարութիւններու հետ (2):

Պղնձագործութիւնը յատկապէս զարգացած է Հայաստանի քա-

1. Պարսկերէնէ (چينج birinj) փոխառեալ բառ (Տես՝ Հ. Աճառեան, Հայերէն Արժատական Բառարան, Ե. հտր. Երևան, 1931, էջ 1076): Լատիներէն cuprum կամ coprium բառը առաջացած է կիպրոս կղզիի անուանէ՝ Chypus. Այսպէս կոչուած է կղզին՝ պղինձի իր հարուստ հանքերում համար: Անգլերէն copper բառը փոխառութիւն է լատիներէնէ: Պղինձը՝ սկիիմ հետ միակ գուճաւոր մետաղ է, որում խտութիւնն է (densité) 8,85:

2. Վ. Ա. Արքահամեան, Արհեստները Հայաստանում, Երևան, 1956, էջ 57:

դաջներուն մէջ, ու մանաւանդ թ. դարէն ետք: Կարելոր քանակութեամբ պղնձեայ անոթներ դառնուած են Անիի ու Դուինի պեղումներու ընթացքին (3), որոնք, սակայն, արձանագրութիւններ չեն կրեր:

Պղնձագործները իրենց արհեստը ի դործ դնելու ընթացքին դիմած են կոման, կոփման, ձուլման եւ դրուագրման միջոցառումներուն: Այդ իսկ պատճառով անոնք ոչ միայն տարբեր տեսակի մուրճեր ու սալեր օգտագործած են, այլ եւ՝ կաղապարներ: Հայաստանի մէջ եղած բազմազան կաղապարներու մասին կը վկայեն ոչ միայն պեղումներէն յայտնաբերուած նիւթական մնացորդները, հապա եւ մատենագրութեան մէջ եղած յիշատակութիւնները (4):

Պղինձը, որ ենթակայ է ժանդտելու, եւ որուն ժանգը խիստ թունաւոր է, կը դառնայ տնային անգործածելի սպաս, եթէ չկլայուի: Ահա թէ ինչու պղնձագործութեան հետ զուգընթաց զարգացած է նաեւ կլայագործութիւնը:

Արհեստագործութեան զարգացման հետ միջնադարեան Հայաստանի մէջ կը սկսին ձեւաւորուիլ նաեւ արհեստակցական խմբաւորումները՝ համաքրութիւնները: Հին շրջաններուն, մարդիկ այս կամ այն արհեստի դիւտը վերագրած են առասպելական դէմքերու, սուրբերու եւ կամ աստուածներու: Այդ իսկ պատճառով, երբ համաքրութիւնները կը յառջանան, վերոյիշեալ սուրբերուն եւ աստուածներուն կը վերագրուի այդ արհեստը հովանաւորողի, կամ պաշտպանողի դերը: Այսպէս՝ բրուտներ հովանաւորող սուրբը եղած է Սուրբ Յակոբը, կաշեգործները հովանաւորողը՝ Եղիա Մարգարէն, դերձակները հովանաւորողը՝ Աղամն ու Եւան, հացթուխները՝ Քըրիստոս, կլայագործները՝ Սուրբ Յակոբը, եւլն. (5):

Սակայն ուշադրաւ է նաեւ այն պարագան, որ նոյն արհեստը՝ տարբեր շրջաններու մէջ ունեցած է հովանաւորող տարբեր սուրբեր: Այսպէս՝ Ախալցխայի դարբիններն ու պղնձագործները հովանաւորող սուրբերը եղած են Կայենի յետնորդներ՝ Յորեղն ու Թորեղը, էրզրումի դարբիններն ու պղնձագործները՝ հովանաւորող սուրբը՝

3. Նոյնը, էջ 57-58:

4. Նոյնը, էջ 64-66: Հայաստանի մէջ օգտագործուած կոնիու, կոփելու, ձուլելու, դրուագրելու եւ կաղապարելու եղանակներու մանրամասնութեամբ համար տես՝ Բ. Առաքելեան, Հայկական Պատկերաքանդակները Դ-Է. Դարերում, Երևան 1949, էջ 102-103: Բ. Առաքելեան, Քաղաքները եւ Արհեստները Հայաստանում, Թ-ԺԳ. Դարերում, Ա. հտր., Երևան, 1958, էջ 153-163:

5. Բ. Առաքելեան, Քաղաքները եւ Արհեստները Հայաստանում Թ-ԺԳ. Դարերում, Բ. հտր., Երևան, 1964, էջ 185:

Դաւիթ մարդարէն (6), իսկ Տերսիմի պղնձադործութեան պաշտպան եւ հովանաւորող սուրբը՝ Պօղոս-Պետրոսը (7) :

Հին ու միջին դարերու մէջ ծանօթ այս աւանդութիւնները իրենց գոյութիւնը շարունակած են նաեւ ԺԼ. եւ ԺԹ. դարերուն : Եւ ինչպէս միջնադարուն, նոյնպէս եւ ԺԼ. եւ ԺԹ. դարերուն, Հայաստանի եւ Կիլիկիոյ քաղաքներուն մէջ, ինչպէս արհեստակցական այլ խմբակցութիւններ, պղնձադործներն ու կլայեկիչներն ալ ունեցած են իրենց մասնաւոր թաղամասերը, զիրենք հովանաւորող սուրբերը եւ իրենց յատուկ տօնական օրերը (8) :

Համբարութիւնները ունեցած են նաեւ իրենց դրօշակները, որոնցմէ մեզի հասած է Ալեքսանդրապոլի (Լենինական) ԺԹ. դարու պղնձադործներու դրօշակը :



Ալեքսանդրապոլի պղնձագործներու համբարութեան դրօշակը (9)

6. Նոյնը :

7. Գեորգ Հալաբեան, Դերսիմի Հայերի Ազգագրութիւնը, Մասն Ա., Երևան, 1975, էջ 168 :

8. Վ. Աբրահամեան, Արհեստները Հայաստանում, էջ 250 :

9. ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Պատմութեան ինստիտուտ, Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հայաստանը 1801-1870 Թուականներին, Երևան, 1974, էջ 262 :

ՆԿԱՐԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԵԱՅ ԱՆՕԹՆԵՐՈՒ

Հետագայ էջերուն մէջ պիտի խօսինք 300 տարուայ ժամանակամիջոցէ եկած (1600—1915 թթ.) մեր՝ ու մեզի ծանօթ Հաստատութեանց ու բարեկամներու մօտ գտնուող, եւ Հայերէն արձանագրութիւններ ունեցող պղինձեայ իրերու եւ անօթներու մասին: Այս դարաշրջաններուն պատկանող պղինձներուն մասին մեր մատենագրութիւնը Համարեայ թէ ոչինչ Հրատարակած է որպէս մենագրութիւն, վերլուծում կամ ուսումնասիրութիւն: Միակ դործը, որ Հայերէն արձանագրութիւն ունեցող պղինձներու մասին կը խօսի, Հայկական ՍՍՌ Գիտութիւններու Ակադեմիայի եւ Հայաստանի Պետական Պատմական Թանգարանի կողմէ Հրատարակուած՝ «Յատկանշական Յուցակ Թանգարանային Ժողովածուների» (10) աշխատասիրութիւնն է: Հատորը կը բովանդակէ Հայերէն արձանագրութիւն կրող այն բոլոր իրերը, որոնք կը գտնուին Երեւանի Պետական Պատմական Թանգարանին մէջ: Հատորին մէջ ցուցակազրուած են քարերու, վայտի, արծաթեայ, ասեղնազործ, ու պղինձեայ այլ եւ այլ իրերու արձանագրութիւնները միայն: Այս մասին խմբագրութեան կողմէ Փրոֆ. Կ. Ղաֆաղարեան կը գրէ. «Ներկայ պրակում Հրատարակում ենք իրենց վրայ Հայերէն արձանագրութիւն ունեցող 307 առարկաներ, կամ, աւելի ճիշդ, այդ առարկաների վրայի արձանագրութիւնները՝ առանց առարկաների նկարագրութեան: Այդպէս ենք վարուել կրկնութիւնից խուսափելու Համար, որովհետեւ այդ նոյն առարկաները նկարագրուելու են Թանգարանի Համապատասխան ժողովածուների մէջ, իրենց Հերթական տեղում» (11):

Հրատարակուած պղինձներու թիւը 95 կտոր է (12): Այս պղինձները Հայ ազգագրութեան Համար կարեւոր են, այն պատճառով որ անոնք կը կրեն Հայերէն արձանագրութիւններ, երբ դրեթէ Պատմական Հայաստանի այլ եւ այլ պեղումներէն յայտնարեցուած պղինձեայ անօթներէն եւ ոչ մէկը ունի Հայերէն արձանագրութեան որեւէ հետք:

Պաշտօնապէս ճանչցուած Հայկական պղինձներու ամենակարեւոր Հաւաքածոն այժմ կը գտնուի Երեւանի Պետական Պատմական Թանգարանի ազգագրական բաժնին մէջ, որոնց թիւը 95-ը չ'անցնիր: Երկրորդ կարեւոր Հաւաքածոն, մօտ 90 կտորներէ բաղկացած, կը պատ-

10. Եւգիմէ Մուշեղեան, Յատկանշական Յուցակ Թանգարանային Ժողովածուներ, Պրակ Ա., Երեւան:

11. Նոյնը, էջ 4:

12. Տե՛ս՝ նոյնը, էջ 127-283:

կանէր պէյրութարնակ Տիար Վահէ Սէթեանին, որ դժբախտաբար 1976-1977 թթ.ու լիբանանեան քաղաքացիական կռիւններուն զոհ դնաց աւարառութեան (13) :

Վերջերս միայն յայտնի դարձաւ որ հանդուցեալ բանասէր ու հնարան Յարութիւն Քիւրտեանի հաւաքումներուն մէջ կային նաեւ թուրքիայէն բերուած մօտ երկու հարիւր հայկական պղինձեայ ամաններ : Յունաստան ապրող ազգայինի մը մօտ կան թուրքիայէն բերուած հայատառ արձանադրութեամբ հարիւրի հասնող պնակներ, որոնց կարելի չեղաւ ծանօթանալ, հակառակ մեր բոլոր ջանքերուն :

Արտասահման դտնուող հայկական պղինձներու ամենակարեւոր, եւ մեծ հաւաքածոն մեր անձնական հաւաքածոն է, որ կը բաղկանայ 500 կտորներէ : Կան նաեւ փոքր թիւերով հաւաքումներ, որոնց ցանկը կու տանք ստորեւ .

Նշան Փալանճեան ձեմարան թանգարանի հաւաքածոյ (Պէյրութ, մեր միջոցով ապահովուած)	20 կտոր
Սիւմոն Սիւմոնեանի մօտ (Պէյրութ, մեր կողմէ ապահովուած)	4 »
Գրիգոր Մազլումեան հաւաքածոյ (Հալէպ, Օթէլ Պարոն)	12 »
Դամասկոսի Պետական Պատմական Թանգարան	1 »
Դամասկոսի Պետական Ազգադրական Թանգարան	1 »
Իրաւարան Ֆրէտ Արսլանեանի մօտ (Դամասկոս)	1 »
Գրիգոր Բարսեղեանի մօտ (Դամասկոս)	1 »
Հրանդ Մուրատեանի մօտ (Պէյրութ)	1 »
Տոքթ. Յ. Ենիգոմշուեանի մօտ (Պէյրութ)	2 »
Կիրակոս Միսճեանի մօտ (Պէյրութ)	10 »
Լեոնալիբանանի Զմմառու վանք (մեր կողմէ նուիրուած)	1 »
Միածին Հաւանճեանի մօտ (Հալէպ)	2 »
Գառնիկ Հալաճեանի մօտ (ԱՄՆ, ուրիշ պղինձներ ալ ունի	1 »
Ճորճ Սարաֆեանի մօտ (Թեքսաս, ԱՄՆ, մեր կողմէ հայթայթուած)	2 »

Վերոյիշեալ 720 պղինձները, անօթ, սպաս կամ իր, բացարձակ մեծամասնութեամբ, բացի Երեւանի Պետական Պատմական Թանգարանի 90 կտոր պղինձներէն, դտնուած են Պատմական Սուրիոյ սահմաններէն ներս, կամ՝ անոր սահմանադժի մօտիկ վայրերէն : Գլխաւոր կեդրոն ունենալով Հալէպը, որ Դամասկոսի հետ, հին ժամանակ, թէ՛ միջազգային կարաւանային վաճառականական կարեւոր հանդոցներ էին, եւ թէ՛ միեւնոյն ատեն, եղած էին զէպի Երուսաղէմ

13. Բարեբախտաբար ժամանակիմ ցուցակագրած եմք գտնոք, միաժամանակ լուսանկարելով ամոնց կարեւարագոյնները :

ուխտի դացող ուխտաւորներուն հաւաքատեղիները: Սուրբիոյ պատմական շրջադժի մօտիկ վայրերն էին Քիլիս, Այնթէպ, Ուրֆա, եւ Տիրարպեղեր: Մեծ բարեբախտութիւն մը եղած է որ մեզի հասած պղղինձներուն մեծամասնութիւնը, շինուած ընտիր կարմիր պղինձէ եւ տոկուն, դիմացեր է դարեր, ու հասեր մեր օրերուն: Տակաւին անոնց մէջ կան այնպիսի տոկուն պղինձներ, որոնք կարծես շինուած են յաւիտենականութեան համար: Ձեռք բերած ենք պնակներ, որոնք, նոր կլայեկուած, տակաւին դործածական էին իրենց վերջին արար տէրերէն, հակառակ իրենց հարիւրաւոր տարիներու հնութեան:

Այստեղ խիստ սեղմ էջերու մէջ պիտի աշխատինք ներկայացընել հայկական պղինձին դիւսաւոր առանձնայատկութիւններէն մէկ քանին: Այս էջերով կ'ուզենք հայկական հնութիւններով դրաղուող հաստատութիւններուն, նաեւ անհատներուն ուշադրութեան առարկան դարձնել զանոնք, որպէսզի որքան կարելի է, դուրդուրան եւ հաւաքեն դանոնք, առանց նկատի առնելու անոնց վաճառականական արժէքը, դեղեցիկն ու տղեղը, պիտանին կամ անդործածելին, որովհետեւ պէտք է նշանաբան ունենալ այն իրողութիւնը, թէ՛ հնագիտութեան մէջ անարժէք բան դոյուութիւն չունի:

Թէեւ միատեսակ պղինձներ շատ կան, սակայն կան եւ այնպիսի իրեր եւ անօթներ, որոնցմէ միայն մէկ օրինակ հասեր է մեզի: Ուրիշներ կան, որոնք իրենց զարդանաշխերու պէսպիսութիւններով ու ոճաւորուած մոթիֆներով կը ներկայացնեն տեսակ մը դժուարական հիմներ, կամ այլապէս՝ պղնձեայ պատատներ:

ՀԱՅԿ. ՊՂՆՁԵԱՅ ԱՆՕԹՆԵՐՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԺԵՔԸ

Կարելի չէ դոճանալ պղնձեայ անօթի մը պարզ նկարագրականութիւնը, Լուսանկարչական-մեքենական դործ է նշել անուն, թուական, ձեւ եւ չափագրութիւն: Անհրաժեշտ է դործին մօտենալ գիտականօրէն, որդեղրել բաղդատական եւ ստուղարանական եղանակը, որպէսզի կարելի ըլլայ հասնիլ առարկայական եզրակացութիւններու:

Հայատառ պղնձեայ անօթները, իրենց հայկականութեամբ, որոշ ողեկան արժէք մըն ալ կը ներկայացնեն հայ մարդուն համար:

Հայ հնաբանն ու բանասիրողը անպայման պիտի համակրի այս յուշարձաններուն, երբ անոնց մօտենայ որպէս իր նախնիներէն վերապրած նշխարներու, ու անոնց տայ նիւթականէն անդին դտնուող արժէք մըն ալ՝ ողեկանը:

Հայկական պղնձեայ անօթները իրենց կողերուն կը կրեն այլադան արձանագրութիւններ, նշաններ, կնիքներ, եւ այլ եւ այլ արձանագրութիւններ:

Իրենց նախկին հայ սեփականատէրերուն ճակատագրէն անմա-

սըն չեն մնացեր նաև Հայկական պղինձները: Անոնց հետ իրենք եւս սպրեր են խաղաղ ու բարգաւաճ օրեր, բայց եւ տեսեր են անորոշութիւն, հալածանք ու սարսափ: Փոշի եւ յուշ դարձեր են անոնց նախկին տէրերը, փոշիացեր են նաև այս պղինձները յափշտակող, աւարառող հին ու նոր սերունդները, սակայն ճակատադէր չդիտես ինչպիսի խաղերով, ճղճիմ մարմիններով այս պարզունակ իրերը, դաժան ճակատադէրին կուրծք տալով, զարմանալիօրէն Հասեր են մեր օրերուն, յաճախ անաղարտ կերպարանքով:

Մեր հաւաքածոներուն մէջ կան մեծ թիւով անօթներ, որոնց հայերէն արձանագրութեանց կողքին, աւարառուն դրոշմեր է իր անունն ու թուականը: Երբեմն աւարառուներ ուղած են ի սպառ ջնջել նախկին տիրող յիշատակը: Քանի մը նմոյշներ այդ պերճախօս անուններէն՝

Հայտար Օղլու մօլլա Սուլէյման, ՀՖ. 1129 ք.

Տէրէստէլի Ապտիլիֆէրիմ լայ, ՀՖ. 1131 ք.

Ապտուլլահ Պապա Զատէ, ՀՖ. 1166 ք.

Ճելտուզ գատէ Պէֆիր ադա, ՀՖ. 1229 ք.

Զօպան Իպրահիմ

Ալի Պիք Թիմուր Խան

Օմար էֆէնտի Թահ Զատէ

Թուհուլտիմ Պիք Պէտիբ Խան

Թաքար Մուսթաֆա ադա

Մուհամմէտ Էլ-Քիւրտի

Եարալ Պիք Խուտետատ:

Երբեմն պնակը մէկէ աւելի տէրերու ծառայած է:

Ունինք պնակներ, որոնց արձանագրութիւնները թէեւ հայատառ, սակայն շարադրութեամբ օսմաներէն են, ինչպէս՝

Աբրահամ Միսիր օղլու

Սէմէրնի Պօղոսուն Օղլու

Հատըրնը Օղլու Երեմիեայ:

Ուրիշներ, որոնց սեփականատէրերուն անունները արձանագրուած են արաբատառ եւ արաբերէն շարադրութեամբ՝

Ժըպրայիլ Պիք Ռուպէն Խուֆա

Ալեֆաան Պիք Սարգիս

Հաննա Պիք Եուսէֆ Պօղոս

Ալլահվերտի Մարտիրոս

Մուհա Պիք Ուանէս

Ժըպրայիլ Պիք Տատուր

Եուսէֆ Տիարպիֆիրի:

Վերոյիշեալ պնակները թերեւս տեղացի արաբախօս հայերու պատկանած են: Կան նաեւ յունարէն արձանագրութեամբ պնակներ, որոնցմէ մէկը հաւանաբար հայ-հոռոմի մը պատկանած ըլլայ, որուն վրայ կարելի է կարդալ՝ Խաչիկ աղայի մը անունը:

Աղբազրականօրէն առած խիստ կարեւոր են բազմաթիւ այն արձանագրութիւնները, որոնց մէջ յիշատակուած անունները խիստ օտարոտի կը հնչեն մեր ականջներուն, եւ որոնց մասին, ուրիշ առիթով մը, ակադեմիկոս Յ. Ա. Օրբելի գրած է. «Եթէ նոյնիսկ մի կողմ թողնենք արձանագրութիւնների բովանդակութիւնը եւ զբաղուենք նրանց միայն ձեւի ուսումնասիրութեամբ կամ նրանց մէջ յիշատակուող անուններով, ապա այստեղ էլ աղքատիկ թուացող նիւթը պայծառ լոյս կը սփռուի, հին հայերի տարբեր դասակարգերի, տրամադրութիւնների, նրանց փոխադարձ յարաբերութիւնների վրայ: Չէ՞ որ միայն վիմագրական տուեալների շնորհիւ յաջողուեց պարզել այն հետաքրքրական փաստը, որ ԺԱ. դարում հայ ազնուականութեան ներկայացուցիչները, ունենալով սեփական մկրտութեան տոմարական անունները, սիրում էին կենցաղում կրել մուսուլմանական, մեծ մասամբ արաբական անուններ: Մինչդեռ ցածր խաւերի ներկայացուցիչներին վերաբերող արձանագրութիւնների մէջ երեւան են գալիս, սովորաբար, միայն տոմարական քրիստոնէական անուններ, իսկ վերջին շրջանում՝ միայն սիրուած ժողովրդական անուններ: Անունների համակարգի այս ցայտուն տարբերութիւնը հասկնալի կը լինի եթէ նկատի ունենանք ազնուականութեան ձգտումը դէպի ամէն ինչի օտարը, իսկ ստորին խաւերինը դէպի՝ հայրենին» (14):

Պէտք է նշել որ եթէ Օրբելիի այս նկատառութիւնները ճիշդ էին ԺԱ. դարուն համար, ապա ԺԷ. եւ ԺԸ. դարերուն չափանիշերը բոլորովին շրջուած էին: Այս վերջին դարերուն, հայը շատոնց կորսընցուցած էր իր պետականութիւնն ու անկախութիւնը, ըլլայ Հայաստանի, ըլլայ Հայակիւրիկոյ մէջ: Անունները այլեւս միայն արաբական չեն, այլ նաեւ պարսկական եւ թրքական: Նկատելով որ ընդհանրապէս այս արձանագրութեանց տէրերը իշխաններ չէին եւ ոչ ալ պաշտօնատարներ, գործածուած էին միայն միջին եւ խոնարհ դասակարգի պատկանող անհատներու կողմէ, ենթադրել կու տան որ ժողովուրդը տակաւ սկսած էր կորսնցնել իր հայեցիութիւնը, ու կ'ապրէր անկումի շրջան մը, եւ ուրեմն՝ սկսած էր հոգեպէս ալ այլասերիլ:

Այս օտարոտի անձնանունները ոչ միայն առկայ են հայկական

14. Յ. Ա. Օրբելի, Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ Ա., Անի Քաղաք, Երևան, 1966, էջ Ը.:

պղինձներուն վրայ, այլ նաեւ ողողած են հայ մատենագիտութիւնը, վիճաբանութիւնն ու մազաղագիտայ յիշատակարանները, որոնց ի տես չ. Աճառեան կը գրէ.

«Զգիտեմ թէ ի՛նչպէս պէտք է մեկնել այս երեւոյթը: Անշուշտ մահմետականները չստիպեցին մեզ, որ մենք բուն կերպով ընդունենք իրենց անունները: Երեւի այս էլ զերիշխան տարրի բնական ազդեցութեան արդիւնքն է, ազդեցութիւն՝ որ ամէն ձեւի ու ամէն հանգամանքի մէջ էլ իր գործը տեսնում է, եւ փոքր, նուաճուած ազգերը իրեն է քաշում, իրեն է միացնում» (15):

Շնորհիւ այդ օտարոտի անուններուն կարելի կ'ըլլայ որոշել մեր տրամագրութեան տակ զտնուող պղինձներու տէրերուն բնակավայրերը:

Օրինակ, պարսկական կարելի է համարել վարի մի քանի անունները.

Խուտավերտի (Աստուածատուրն է, եւ կազմած է Խուտավերտեան մականունը):

Իմիրգայ (եղած է Իմիրգեան):

Միրիջան (եղած է Միրիջանեան):

Թրքական ծագում կրնան ունենալ հետեւեալ անունները.

Ասլան (եղած է Ասլանեան)

Հատըմը Օղլու (եղած է Գաթըրճեան)

Քիրիշմի Օղլու (եղած է Քիրիշմեան)

Թախթապուռում (եղած է Թախթապուռումեան)

Եկիլմէզ (եղած է Էկիլմէզեան)

Հապիպ Զատէ (եղած է Հապիպեան)

Արարական են հետեւեալները.

Մըսըր (եղած է Մըսրեան)

Հատիս (եղած է Հատիտեան)

Մազաուտ (եղած է Մազաուտեան)

Խըտըր (եղած է Խըտըրլարեան)

Զուտ արարական քրիստոնեայ անուններ են.

Ճոմոս = Գէորգ

Պեշարա = Աւետիս

Ֆէրմուլոյ = Փարատ Ալլահ

Անձնանունները կրնան ժողովուրդի մը քաղաքական եւ հոգեւոր մշակոյթին աստիճանաչափը պատկերացնել:

Գլխասպտոյտ կը պատճառեն վերոյիշեալ եւ ուրիշ ոչ Հայկական անձնանունները, որոնք ոչ միայն առկայ են Հայկական պղինձներուն վրայ, այլ առհասարակ մեր մատենադրութեան մէջ: Բարեբախտաբար Հայ աղգային առողջ բնագոյր իր բեկումի դործողութիւնը կատարած է ատենին՝ իր անուանացանկէն դուրս նետած է խժալուր այդ օտարոտի անձնանուններու մեծամասնութիւնը:

ՏԱՌԵՐՈՒ ՔԱՆԴԱԿՄԱՆ ԱՐՈՒԵՍ, ԳՐԵԼԱԶԵՒ, ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ

Հայկական պղինձներուն արձանագրութեանց մեծամասնութիւնը կատարուած է բարձրաքանդակ եւ գլխազրային: Ահա թէ ինչպէս տեղի կ'ունենար այդ դործողութիւնը: Այդ կը կատարուէր քանդակուելիք տառերուն շուրջի հարթ յատակի պարպումով միայն: Այդ դործողութենէն ետք, տառերը ի յայտ կու գան բարձր ու ցցուն, սակայն, միեւնոյն ժամանակ՝ փորագրուած տառերուն մակերեսը կը մնայ ճիշդ հարթակին համընթաց եւ համահաւասար:

Գալով տառատեսակներուն, կարելի չէ դանոնք որեւէ դպրոցի կամ տառատեսակի հետ կանոնաւոր կերպով բաղդատութեան դնել կամ կապել: Վարպետները, որոնց մեծամասնութիւնը ինքնուս պղնձագործութեամբ զբաղող աշխատաւորներ եղած են, քանդակելու ատեն հետեւած չեն մասնաւոր նորմերու: Անոնք ցրուած էին Հայաշխարհի ամբողջ տարածքին, եւ դրացի շրջաններ՝ Նոր Զուղա, Տիրապեքիր, Ուրֆա, Քիլիս, Այնթէպ, Կ. Պոլիս: Յետոյ՝ միայն աշխարհագրական տարածութիւնը չէր զանոնք իրարմէ բաժնողը, կար ժամանակի աղդակը՝ Ժէ., ԺԼ., ԺԹ. դարերու երեք հարիւրամեայ անջրպետը: Եթէ նոր ջուղացին, իրեն որպէս նախատիպ օրինակ օգտագործեր է իր շուրջ գտնուող հազարաւոր խաչքարերն ու վանքերու վիմագրութիւնները, տիրապեքիրցին կամ քիլիսցին չէ ունեցած այդ առաւելութիւնը: Բացառիկ պարագաներու մէջ կրնայ գրիչ մը ըստանձնել այս կամ այն արձանագրութեան պատճէնը պատրաստելու դործը, որուն հետեւանքով արձանագրութեան ղեղադրութիւնը կ'ըլլայ կատարեալ:

Մեծ քաղաքներու մէջ մետաղի վրայ քանդակող վարպետ գրքիչներ շատ կային, ինչպէս ոսկերիչները, սակայն քիչ անդամ կըրնայ պատահիլ որ այդ քանդակողը իր ոսկին կամ արծաթը ձգելով սթանադին պղինձին վրայ աշխատիլ ուզէ: Երբեմն փորագրողը կը դործէ իրեն հրամցուած պատճէնին համաձայն:

ԱՐԱՐԵՐԻՆ ԵՒ ՀԱՅԵՐԻՆ ԳՐԵԼԱԿԵՐՊԵՐ ԵՒ ԱԿՕՍԱԶԵՒ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս սեւէ արաբ ղեղապիր մէկ օրէն միւսը չի կրնար ընտե-

լանալ հայ տառերու գրեւակերպին ու նկարապրին, այնպէս ալ հայ փորագրելէն չի կրնար արարական գրեւակերպի ոճով արարեբէն տառեր դեղագրել, մանաւանդ բարձրաքանդակ ոճով :

Արարական դեղագրութիւնը արուեստի նրբութեան հասած է, իր դարձգարձիկ, մշտափոփոխ, դալարածեւ նկարագրով :

Տառասկիզբը ան կը սկսի մանր ու սրածայր, ու ապա՝ կ'ընթանայ դանդաղօրէն լայնալով, կ'ուռի ու յանկարծ, հակադրող շարժումով մը կը ստանայ իր նախկին սրածութիւնը, ու այսպէս անվիբջ : Ան կը նմանի յստաջացող սողունի մը, յարաշարժ ու դալարուն :

Այս պատճառներով հայ դաւառացի պարզ փորագրելէ մը երբեք պիտի չյաջողէր իր հայկական ոճով՝ արարեբէն բարձրաքանդակ արձանագրութիւն մը քանդակել : Նման արարեբէն արձանագրութիւն մը անմիջապէս պիտի մատնէր հեղինակին հայ ըլլալը : Մեր հաւաքածոյին մէջ ունինք նման երկու պնակներ, եւ կը կարծենք թէ անոնց միւրայի թէ՛ նաշխարարէրը, եւ թէ՛ արձանագրութիւնները հայկական են :

Մեր հաւաքածոյին մէջ դանտոյ արարեբէն կամ օսմանեբէն արձանագրութեանց մեծամասնութիւնը խորագիր ոճով փորագրուած են : Ասոնք, ինչպէս վերը յիշեցինք, ընդհանրապէս յափշտակիչնու առուները կը ներկայացնեն :

Պորագիր կամ ակօսածեւ փորագրութիւնը նպաստաւոր է արար կամ հայ փորագրելին, որովհետեւ մեծապէս կը դիւրացնէ փորելին կամ նկատին երթը մետաղին վրայ :

Օտար այդ արձանագրութիւններէն շատերը ներկայացուած են թուրայածեւ կամ թուրայածեւ (طرا) : Թուրան՝ օսմանցի սուլթաններու կամ օրուան խալիֆային դեղարուեստօրէն փակագրուեալ անունն է : Թուրան սիրելի եղած է մահմետականներուն, որովհետեւ ան կը ներկայացնէ իրենց կրօնապետին, խալիֆային անունը : Ան կը դրոշմուէր սուլթանական, ֆերմաններուն, պետական կնիքներուն, ոսկի : արծաթ եւ պղինձ դրամներուն վրայ, ինչպէս նաեւ ամէն տեսակի պաշտօնական գրութեանց ճակատին :

Հայերը ամենէն աննպաստ պայմաններու տակ իսկ չեն ուղած դործածել այդ սուլթանական կնիքը իրենց անհատական սպասներուն վրայ :

Մեղի համար անհնարին է որոշել թէ պղնձագործ քանդակողը ինչպիսի ազդիւրներու դիմած է իր գործը դրուիս հանելու համար : Սակայն այս չի նշանակեր, ինչպէս ամէն մարդէ ներս ալ, որ չզրտնուին այնպիսիներ, որոնք ունեցած ըլլան բարձր ճաշակ, նորարութեան բնածին ձիրք ու մեղի հրամցնեն արտասովոր գեղեցկութեամբ յիշատակագրութիւններ :

ՓԱԿԱԿԻՐ ԿԱՄ ԼԾԱՎԻՑ ՏԱՌԵՐ ԵՒ ՓԱԿԱԳՐԵՐՈՒ
ԱՆՈՒԱՆԱԴՐՈՇՄՆԵՐ

Հայկական պղինձներու արձանագրութեանց մէջ կան մեծ թիւով փակադիր տառեր: Եթէ զանոնք բաղդատութեան դնենք Արբա-
համեանի «Հայոց Գիր եւ Գրչութիւն» (Երեւան, 1973) հատորին ներ-
կայացուցած նմանօրինակ լծակից տառերուն, անմիջապէս պիտի
հաստատենք թէ այնտեղ՝ պղինձներուն վրայ, մեծ թիւով անտիպ
փակադրեր կան: Նոյնն է պարագան նաեւ փակադրեալ կնքադրոշմ-
ներուն:

Ակադեմիկոս Օրբելին մեծ կարեւորութիւն տուած է փակադ-
րերուն:

«Ներկայումս հայկական արձանագրութիւնների հրատարակու-
թիւնը նոր ձեւ է ընդունում: Այդ արձանագրութիւնների ստույգ վե-
րարտագրութեան համար անհրաժեշտ են յատուկ փակադրային տա-
ռանիշեր: Դեռեւս 1909 թ., երբ Սաչենից բերուած արձանագրու-
թիւններում դտնուեցին 300-ից աւելի փակադրային տառաձեւեր,
անհրաժեշտութիւն զգացուեց հետազայում հայկական արձանագր-
ութիւնները հրատարակել՝ պահպանելով փակադրերը, որը երբե-
մըն, յատկապէս անձնանուններում, բացման չի ենթարկուում» (16):

Հայկական պղինձներուն վրայ տեսնուող փակադրերուն քա-
նակը հարիւրներու կը հասնի, բաժնուած ութսուն հինգ տեսակ փա-
կադրերէ (տես՝ էջ 209, տախտակ թիւ 1):


ՀԱՅ ՊԼՆՁԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐ, 1815-1915 ԹԹ.

Ստորեւ կը ներկայացնենք 1815-1915 թթ.ու միջեւ երկարող
ժամանակաշրջանի այն հայ պղնձագործ վարպետներու անունները,
որոնք ծանօթ են մեզի, եւ զորս քաղած ենք մեր տրամագրութեան
տակ զտնուող հայկական պղնձեայ անօթներու արձանագրութիւննե-
րէն: Անուններու արձանագրութիւնները կատարուած են հայերէնով,
արաբերէնով, արաբատառ օսմաներէնով, Ֆրանսերէնով, կամ յու-
նարէնով: Մեր կողմէ ընդգծոււմով ներկայացուածները արձանագրու-
ուած են արաբերէնով, կամ՝ արաբատառ օսմաներէնով, այլապէս՝
փակագրիժի մէջ յիշած ենք արձանագրութեան համար օգտագործուած
լեզուն: Հագուադէպ պարագաներու՝ երբ արձանագրութիւնը կատար-
ուած է մէկէ աւելի լեզուններով, զայն արտագրած ենք իր ընդգրային
վիճակին մէջ:

Յակոբ Ուստա (Այնթէպ, դրոշմ-կնիք):

		—		∴	✱	⊕	✱	
⊕	⊕	⊕	⊕	⊕	⊕	⊕	⊕	ω
←	∇	⊕	∇	⊕	⊕	⊕	⊕	⊕
○	⊕	∴	∴	✱	✱	✱/✱	✱	
✱-✱/✱	∴	∴	✱	✱	∴	∴	∴	
∴	∴	∴	∴	∴	∴	∴	∴	∴

Տախտակ քիւ 2




Նկար քիւ 1



Նկար քիւ 2




Նկար քիւ 3



Նկար թիւ 4



Նկար թիւ 5



Նկար թիւ 6





Նկար թիւ 7



Նկար թիւ 8

Նկար թիւ 9



Նկար թիւ 10




Նկար թիւ 11






Նկար քիւ. 12




Նկար քիւ. 13




Նկար քիւ 14



Նկար քիւ 15



Նկար թիւ 16





Նկար քիւ 18




Նկար քիւ 19




Նկար քիւ 20



Նկար քիւ 21



Նկար քիւ. 22



Նկար քիւ. 23



Նկար քիւ 24



Նկար քիւ 25



Նկար թիւ 26



Նկար թիւ 27



Նկար քիւ 28



Նկար քիւ 29

Մինանի Մահտեսի Յակոբ եւ որդիք, Այնթէպ (կնիք) :
 Յակոբ (Այնթէպ, զբողմ-կնիք) :
 Ամբանում (Կ. Պոլիս, զբողմ-կնիք) :
 Հաճի Աբ. Մանուկ Ուզաթմահան, Տիւրքանակերտցի (Փրանսերէն, խոշոր կնիք) :

Ատուր (փակազրեալ զբողմ-անուն) :

Ատուր (փակազրեալ զբողմ-անուն), Հիւճրեթի, [12] 97 թ. :

Ատուր (փակազրեալ զբողմ-անուն), Հճ. [12] 80 թ. :

Ուստա Ատուր, Հն, 1282 ք. (զբողմ-կնիք) :

Էնքարէրէ Արթին, 1885 թ. (թափծու-անուն) :

Առաքել (փակազրեալ զբողմ-անուն) :

Հաճի Արթին (զբողմ-անուն) :

Հաճի Արթին (Փրանսերէն, հաւանաբար Կ. Պոլիս, զբողմ-կնիք) :

Արթուն (փակազրեալ զբողմ-անուն) :

Արթն, Յնս. Պօղէզձէնեան, Այնթէպ (կնիք) :

Արիմեան եղբայրք (խոշոր կնիք) :

Արալան Պապա (խոշոր կնիք) :

Արալան Պապա, եւ որդիք, Այնթէպ :

Արալանեան եղբայրք, Այնթէպ :

Արսո :

Արսո Արալանեան (խոշոր կնիք) :

Աւագ (զբողմ-կնիք) :

Աւագ Շըխրըտըմեան, Սիս :

Աւետիսի գործ (զբողմ-կնիք) :

Ավետիս (փակազրեալ զբողմ-կնիք) :

Թեջան [12] 86 (փակազրեալ զբողմ-անուն) :

Գարբիէլ (փակազրեալ զբողմ-անուն) :

Գէորգ (զբողմ-կնիք) :

Գէորգ Արալանեան (խոշոր կնիք) :

Գէորգ Պիլէմճեան :

Գէորգ (փակազրեալ զբողմ-անուն) :

Գորգ (զբողմ-անուն) :

Գրեգոր Պօղէզձէնեան, Այնթէպ :

Կրիգոր Կրպիճեան, Քիլիս (խոշոր կնիք) :

Գրէմքեարեան եղբայրք, Շալ (զբողմ-անուն) :

Դանիէլ Հէճիճեան (Փրանսերէն եւ օսմաներէն) :

Տիւրպէֆիրցի Եուսուֆ, Հն. 1294 (խոշոր զբողմ-կնիք) :

Էղիեա Եսայեան, Այնթէպ (զբողմ-կնիք) :

Ըստեփան (փակազրեալ զբողմ-անուն) :

- Ժան Ֆրունճեան (Ֆրանսերէն, հաւանարար՝ Կ. Պոլիս) :
- ԻՇՆ [ան] (փահագրեալ դրոշմ-անուն) :
- Գարայեանի որդի Իպրահիմ, Այնթէպ (դրոշմ-կնիք) :
- Իսկէմետր Արապեան (Կ. Պոլիս, դրոշմուած) :
- Հանի Լեւոն (դրոշմ-կնիք) :
- Խ. Թ. Վան (դրոշմուած) :
- Խ. (վարպետի անուան սկզբնատառ, դրոշմուած) :
- Կարապետ (դրոշմ-կնիք) :
- Կարապետ (դրոշմ-կնիք) :
- Կարապետ (փահագրեալ դրոշմ-անուն) :
- Կարապետ Արսլանեան (խոշոր կնիք-դրոշմ) :
- Կարապետ Ն. Ա. Արսլանեան (դրոշմ-կնիք) :
- Հափօ Կրպիճեան (դրոշմ-կնիք) :
- Հանի Մանուկ (Ֆրանսերէն, դրոշմուած) :
- Մարտիրոս (փահագրեալ դրոշմ-կնիք) :
- Մեղքոն Գալէմքեարեան, Այնթէպ, 1901 ՎՎՎ (դրոշմ-կնիք) :
- Մեղքոն Կարապետեան, 1887 (դրոշմ-կնիք), մէջտեղը՝ ملكون
- Մելքոն Գալէմքեար, Այնթէպ (դրոշմ-կնիք) :
- Մեղքոն Կարապետեան, 1887 (դրոշմ-կնիք), մէջտեղը՝ ملكون
- Մեղքոն Կարապետեան, 1887 (դրոշմ-կնիք) :
- Մեղքոն, Կ. Պոլիս (դրոշմ-կնիք) :
- Մեղքոն, Melkon Պ. Պոլիս (դրոշմ-կնիք) :
- Մեղքոն, Melkon, ملكون Կ. Պոլիս (դրոշմ-կնիք) :
- Յակոբ (Այնթէպ, դրոշմ-կնիք) :
- Յակոբ Հճ. 1255 (դրոշմ-կնիք) :
- Յակոբ Հճ. 1257 (դրոշմ-կնիք) :
- Յակոբ Հճ. [12] 87 (դրոշմ-կնիք) :
- Յակոբ (Եղեսիա, դրոշմ-կնիք) :
- ՄՀ. Յակոբ Գընճեան, Այնթէպ (դրոշմ-կնիք) :
- Յարուժիւն Պէրպէրեան, Այնթէպ (խոշոր դրոշմ-կնիք) :
- Յարուժիւն Պէրպէրեան, Այնթէպ (խոշոր դրոշմ-կնիք) :
- Յովհաննէս Կրպիճեան, Քիլիս (խոշոր դրոշմ-կնիք) :
- Ն. Արսլանեան եղբայրք (Այնթէպ, խոշոր դրոշմ-կնիք) :
- Ներսէս Մանուկեան, Այնթէպ (խոշոր դրոշմ-կնիք) :
- Ներսէս Մանուկեան, Այնթէպ (խոշոր դրոշմ-կնիք) :
- Ներսէս Զօրպաճեան, Այնթէպ (դրոշմ-կնիք) :
- Հանի Պարգեւ (Ֆրանսերէն, Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
- Պարոյր (Ֆրանսերէն, Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
- Պերմ (դրոշմ-կնիք) :
- Պողոս (փահագրեալ դրոշմ-կնիք) :

- Սար [չիխ] ՀՃ. 1220 (փակադրեալ դրոշմ-կնիք) :
 Սարչիս, ՀՃ. [12] 81 (փակադրեալ դրոշմ-կնիք) :
 Սարչիս Ձէմպէրճեան, Այնթապ (խոշոր դրոշմ-կնիք) :
 Սր. (Սարչիս? , դրոշմ-կնիք) :
 Հաճի Վահրամ (Փրանսերէն, Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
 Վահրամ, Vahram (Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
 Պղնձագործ Տատուր որդի Ներսէսի, Հճ. 1301 (դրոշմ-կնիք) :
 Տիգրան Սօլազեան (Փրանսերէն, Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
 ՏՔՆ, ان قرا (Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
 Օննիկ (Փրանսերէն, Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
 Օհան (Փրանսերէն, Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :
 Օհնս Կրպճն (խոշոր դրոշմ-կնիք) :
 Օհնս Կրպճ. (խոշոր դրոշմ-կնիք) :
 Յրունճեան եղբայրք (Փրանսերէն, Կ. Պոլիս, դրոշմ-կնիք) :

ՊԼՆՁԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՆՇԱՆԱՁԵՒԵՐ

Յարաբերաբար հին շրջաններուն, երբ տակաւին սոյնորութեան կարգ չէր անցած վարպետներու անուններուն կնիքով դրոշմուիլը պղինձներուն վրայ, վարպետները իրենց սեփական արտադրութիւնը ուրիշներու դորձերէն զանազանելու համար առանձին նշաններ գործածած են (տես՝ էջ 210, տախտակ թիւ 2) :

Այս աննշան թուացող մանրանկարային նշանիկները խիստ կարեւոր են, եւ այլեւայլ օգտակարութիւններ կրնան ունենալ իրերու դասաւորութեան ընթացքին : Բ. Առաքելեանի վկայութեամբ, «Հայաստանի միջնադարեան խեցեղէնի վրայ հանդիպում են եւ դրոշմուած եւ ներկերով գրուած նշաններ : Բնորոշն այստեղ այն է, որ անօթների յատակին ներկերով գրուած նշանները հանդիպում են յախճապակեայ բարձրորակ եւ թանկարժէք իրերի վրայ եւ դժուար է ասել, դրանք վարպետների, թէ պատուիրատուների նշաններն են : Միայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատուիրատուների անունները Հայաստանում արտադրուած խեցեղէնի վրայ յիշատակուած են լինում ոչ թէ յատակին, այլ առաւել յայտնի տեղերում, երբեմն մի երկար տող կազմող արձանագրութեան մէջ, կարելի է ասել, թէ անօթների յատակին թողնուած նշանները աւելի շուտ պատկանում են վարպետներին» (17) :

«Անիի, Դուրնի եւ Գառնիի միջնադարեան խեցեղէնի վրայ

17. Բ. Առաքելեան, Քաղաքները եւ Արհեստները Հայաստանում, Ա. հտք., էջ 252 :

վարպետները նշաններ յաճախ են հանդիպում եւ շատ բազմազան են լինում: Դրա հետ միաժամանակ նոյն նշանը հանդիպում է մի քանի նոյնատիպ պնակների վրայ, որը արդիւնք է այդ անօթների մասսայական արտադրութեան:

«... Թողնուած նշանների ուսումնասիրութիւնը մի առանձին կորեկոթ թիւմայ է եւ դեռ սպասում է իր ուսումնասիրողին» (18):

Վ. Արրահամեանի պնակատանքով, «Բաւական հետաքրքրահան եւ կարեւոր նշանակութիւն ունին այն նշանները, որոնք փորադրուած են այս կամ վարպետի ձեռքով՝ շէնքերի պատերի վրայ: Հայաստանում այդպիսի նշանների հանդիպում ենք է-ժԳ. դարը կառուցուած շէնքերի վրայ: ... Այդ նշաններից կարելի է մօտաւորապէս իմանալ տուեալ շէնքի վրայ աշխատող վարպետների թիւը եւ, ըստ որակի, աշխատանքի դասակարգութիւնը, որովհետեւ սմէն մի վարպետ, ըստ իր որակաւորման, պատրաստել է շէնքի այս կամ այն մասը՝ քարերը, կամբարները, սիւները» (19):

Ս. Գ. Բարխուդարեան իր՝ «Միջնադարեան Հայ Ճարտարպետներ եւ Քարագործ Վարպետներ» խիստ արժէքաւոր գործին մէջ, սոյն նշանագրերու մասին կը գրէ.

«... Գոյութիւն ունի վարպետների յիշատակութեան մի ուրիշ ձեւ եւս, որը թէեւ անուններ յայտնաբերելու համար դրեթէ պիտանի չէ, բայց իր էութեամբ, բաւականին շատ տարածուած լինելու եւ ուրիշ առանձնայատկութիւնների շնորհիւ կարող է թէ՛ վարպետների եւ թէ՛ ճարտարապետական կոթողների ուսումնասիրութեան բընադաստում որոշակի նշանակութիւն ունենալ: Դրանք այսպէս կոչուած «... պետների նշաններ» են, որոնք հանդիպում են Զ-ժ. դարերի շէնքերի պատերին, երեսպատման քարերի վրայ» (20):

«... Վարպետների այդ նշաններն ունեն մի շարք այլ նշանակութիւններ եւս, կապուած թէ՛ ճարտարապետութեան եւ թէ՛ ընդհանուր կուլտուր-պատմական այլ խնդիրների հետ» (21):

Շնորհիւ հայկական պոլիտեխնիկոն կողերուն դաջուած այս նշաններուն, որոնք, բաղդատած հայկական յախճապակիի ու քարի վրայ յայտնուած նշաններուն, արհամարհելի թիւ մը չեն կազմեր, հայ հնագիտութեան բնագաւառէն ներս կու դան նորութիւն մը, եւ նոր երանդաւորում մը մտցնել:

18. Նոյմը, էջ 253:

19. Վ. Արրահամեան, Արհեստները Հայաստանում, էջ 225:

20. Ա. Գ. Բարխուդարեան, Միջնադարեան Հայ Ճարտարպետներ եւ Քարագործ Վարպետներ, Երևան, 1963, էջ 211:

21. Նոյմը, էջ 213:

Վերոյիշեալ նշաններէն զատ կայ նաեւ թեքնիք միջոց մը, թէեւ քիչ մը բարդ, զոր կարելի է նկատի առնել վարպետի մը դործը ուրիշի մը դործէն զանազանելու ստեն :

Ահա թէ ինչպէս : Պղնձեայ կոփածոյ անօթներուն ոռքի կեդրոնին վրայ վարպետներուն ձգած նշանները քննելով, պիտի նկատենք որ ամէն վարպետ իր պնակի ոռքին հաստ մնացած մասին վրայ, ձգած է իրեն յատուկ դրոշմներու հետքեր, որոնք կու դան դոցել կամ պատել, պնակին վերջին կողմը մնացած ծեծուածքի մասերը : Այդ դրոշմուածքները կ'ըլլային այդ դործին համար մասնաւորապէս շինուած դրոշմներու միջոցով (poinçon), որոնք կ'ունենային այլ եւ այլ դարդածեւեր՝ աստղածեւ, մահիկածեւ, կեռածեւ (տես՝ էջ 210, նկար թիւ 1) :

Նշուած վարպետներու դրոշմ-կնիքները ըտլորն ալ կը պատկանին ԺԸ. դարուն, սակայն այդ սովորութիւնը աւելի առաջ ալ դոյրութիւն ունեցած է հայ պղնձագործներուն մօտ, սակայն ոչ ԺԸ. դարու կանոնաւորութեամբ եւ առատութեամբ : Մեր հաւաքածոյին մէջ ունինք մէկէ աւելի օրինակներ, որոնք կը պատկանին ԺԷ. դարուն :

Պղնձներէն ՈՄԱՆՑ ՄԱՀՏԵՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԲՐՈՒՆ
ԳՈՐԾԱԾԱԾ ՎԵՐԱԳԻՐՆԵՐԸ

Մատեսի

Մ.

Մհ.

Մհի.

Մհսի.

Մհտի.

Մհտի.

Մհտեսի

Մահ.

Մահի

Մահսի

Մաղթասի

Միզսի

Մզսի

Մզտսի

Մզտեսի

Մզտիսի

Մեզտսի

Գ. Մհի (երեք անգամ մահտեսի եղած, Պ. Կ.)

Հնի

Հանի

Տակաւին պղինձներու վրայ կան նշումներ, որոնք կը բացա-
յայտեն սեփականատէրերու արհեստը, վարած կրօնական կամ աշ-
խարհական պաշտօնը, ինչ տեղացի ըլլալը, վանքերու եւ եկեղեցիներու
անուններ, ու զեռ բազմաթիւ նկատառելի ու թելադրիչ ծանօթու-
թիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂԻՆՁ ԱՄԱՆՆԵՐՈՒ ԶԱՐԴԱՔԱՆԻԱԿՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Զարդապատկերները, զարդանաշխերն ու զարդածեւերը մարդ-
կային իմացական, մտալոգիկական առաջին արտայայտութիւնները
եղած են, յայտնաբերուած ալլաղան ձեւերու տակ, ժամանակի ու
տարածութեան մէջ, ժայռի, ոսկորի, փայտի, կաւեղէնի ու մետաղի
վրայ: Իսկ աւելի ուշ շրջաններուն, ընդհանրանալով, անոնք տեղ
գտած են ճարտարապետական շինութեանց, դերեզմանաքարերու,
ոսկեայ եւ արծաթեայ արդուզարդի, թաղերու, գօտիներու, ու կեն-
ցաղային զանազան իրերու վրայ: Միջնադարուն՝ միշտ փոփոխակ-
ներով ու տարբեր գաղափարախօսութեամբ անցած են մեր դրչազիր
մատենաներուն, զարդաքանդակներուն, խաչքարերուն, կոթողնե-
րուն, աշխարհիկ եւ եկեղեցական կահոյքներուն, դորդերուն ու այ-
լազան կիրառական ձեռարուեստներուն, եւ ի վերջոյ՝ տեղ գտած են
նաեւ պղնձեայ կենցաղային իրերուն ու անօթներուն վրայ: Այսօր-
ուայ հայկական անօթներուն վրայ տեսնուող եւ որպէս պարզ զար-
դապատկեր գործածուող բոլոր տեսակի՝ պարզ կամ ոճաւոր կենաց
ծառերը, այլեւ չեն զգնուր իրենց նախկին բովանդակութեան ի-
մաստը: Սակայն հակառակ այդ իրողութեան անոնք երբեք չեն դադ-
րի մեր նախնեաց վաղեմի գաղափարախօսութեան նիւթականացած
ձեւաւորումին ու անոր արտայայտութեան վկանները ըլլալէ: Նաշխա-
զարդերու խորքը լրիւ հասկնալու համար անհրաժեշտ է դիմել անոր
նախադադափար-տիպարներու ուսումնասիրութեան: Այդ իմաստով
խիստ հիմնական գործ մըն է Ա. Շ. Մնացականեանի «Հայկական Զար-
դարարուեստը» (Երեւան, 1955): Ուսումնասիրելով նախատիպարնե-
րու ծագման ու զարգացման պատմութիւնը, շատ յստակ կերպով կըր-
նանք հետեւիլ, օրինակ՝ նախաքրիստոնէական «Կենաց Մառեր»ու ի-
մաստին այլափոխման՝ քրիստոնէական նոր գաղափարախօսութեան
մէջ (22): Հայկական զարդանաշխերը ուսումնասիրողին համար սեր-

22. Այս Ուիթի մասին մամբամասնութեամբ համար տես՝ Պերմ Մ. Կարպետ-
եան, Կրկնառիւծ Ուսը, «Հասկ Հայագիտական Տարեգիրք», Բ. Տարի, Ամբիլիաս,
1949-1950, էջ 274-293:

տելի անհատնում առաղձ կը ներկայացնէ Հայկական դորդը, ձեռագործը, ժանեակը, մանրանկարը, ոսկեղէնը :

Սերիկ Դաւթեանի վիպութեամբ. «Հայկական ժանեակների համակերպոն շերտերով դասաւորուած զարդանկարները, որեւէ նախը ռիթմիկ կրկնութիւնը մի շերտի վրայ, յիշեցնում են ուրարտական վահանների զարդանկարների քոմբոզիտիոն ոճը :

«Հայ ժողովուրդը, ժառանգելով ուրարտական կիրառական արուեստի ու արհեստների մշակոյթը, զօդել է այն իր ունեցածի հետ, վերամշակել ու պահպանել երկար դարերի ընթացքում» (23) :

«... ժանեակները նման են Հայ վարպետների ստեղծած բարձրաքանդակներին, եւ քանդակները նման են Հայ վարպետուհիների ստեղծած ժանեակներին : Փոխադարձ նմանութիւններն ակնրախ են : Անի քաղաքի պեղումներից յայտնաբերուած բեկորից մէկի մասին անուանի ճարտարապետ Թ. Թորամանեանը գրել է. «Մարդ ակամայ կ'ապշի, տեսնելով բիրտ ապառաժին մարդկային ձեռքի տակ այսչափ կենդանութիւն ստանալը : Կարծես բնութիւնն ինքնին ստեղծել է այն զմայլելի ներդաշնակութեամբ իրարու խառնուած նրբին քանդակները, որոնցմով զարդարուած էին դրան ճակատը, քարի վրայ քանդակ ըսելէն աւելի, կարելի է ասեղնագործութիւն անուանել, այնպիսի բարակ, մանր գիծեր կան ոլորուած, հիւսուած, որոնք մէկ նայուածքով անկարելի է տեսնել» (24) :

«Մենք գիտական ապացոյցներ չունենք պնդելու, — կը շարունակէ Դաւթեան, — թէ որ բնագաւառն է աղղել որի վրայ : Դժուար է ասել, թէ իրենց թափանցիկ ձեւերը, գծերի նուրբ, մանածոյ զարդանրկարներով դասաւորելը ո՞ր բնագաւառն է որից վերցրել — ժանեակը քարի՞ց, թէ՞ քարը ժանեակից : Կարծում ենք միայն, որ փորագրող վարպետները՝ բարդ զարդանկարները կոշտ քարի վրայ կերտելիս աչքի առաջ են ունեցել ոչ միայն ինչ-որ գծանկարներ, այլ պարզապէս մի որեւէ նիւթական նմոյշ, որը կարող էր լինել ժանեակը կամ ասեղնագործ ձեռագործը (ինչպէս մենք տեսնում ենք ուղղակի նմանութիւններ Մարաշի ասեղնագործութեան եւ Անիի, Հին Ջուղայի քարէ քանդակների միջեւ)» (25) :

«Մեծ նմանութիւններ կան պղինձի սինիների (սիոոց) եւ կըլոր ժանեակների միջեւ : Սինիների մակերեսի վրայ յաճախ զարդանրկարները դասաւորուում են նոյն համակերպոն շրջագծերի, շերտե-

23. Սերիկ Դաւթեան, Հայկական ժանեակ, Երեւան, 1906, էջ 8 :

24. Նոյնը, էջ 9 :

25. Նոյնը :

րի ձեւով, ինչ որ ընտրու է հայկական ժաննակի համար : Պղինձի վըրայ փորագրուած դժերը սեւով լցնելը ստեղծում է զարդանկարների շարքեր, որոնք սինու դաշտի վրայ երեւում են որպէս ծակտակէն ժաննակներ : ... Նմանութիւններ կան ասեղնադործութեան, կարպետադործութեան, գորգերի ու կերպասների, յատկապէս զարդանկարների առանձին տեսակների ու նրանց կոմպոզիցիայի մէջ : Նմանութիւնները ցոյց են տալիս, որ կապեր կան ժողովրդական արուեստի մանաւանդ կիրառական արուեստի բազմատեսակ ճիւղերի եւ ժաննակի միջեւ : Եւ դրանք ամենացայտուն կերպով արտայայտուած են զարդանկարների, բարդ նկարների կառուցումների, նրանց ոճի, գրծերի ու ձեւերի մէջ» (26) :

«Որքան էլ մեծ է եղել հետաքրքրութիւնը ժողովրդական արուեստի հանդէպ՝ զրականութեան մէջ քիչ նիւթ ենք դտնում՝ յատկապէս հայկական ժաննակի վերաբերեալ» (27) :

«Էջմիածնի տաճարի նկարազարդման ու ծաղկազարդման մասին յայտնի է Ղուկաս կաթողիկոսի ժամանակից պահպանուած նկարագրութիւնը, որից օգտուած է Գարեգին Յովսէփեանը : Դոյլերգելով Էջմիածնի տաճարը Յովնաթան Յովնաթանեան նկարչի ձեռքով կատարուած «հիւհիւհի շքեղազարդութիւն եւ նկարակերտութիւն» գործը՝ արձանագրողը դրում է : «Ձուգահաւասար իւրաքանչիւր կամարքն եւ ճակատքն եւ կողմունքն հանդէպ միմիանց համանրման ընկեր առ ընկեր համարադրատ իրերաց՝ խորան ընդ խորանաց, ծաղիկ ընդ ծաղկանց, հաշիւայք ընդ հաշիւայից (ընդդռուժը մերըն է, Ս. Դ.) եւ մանաւանդ զբոլոր մէջն եւ զառաստաղս մեծի լուսակազմ եւ երկնահանգոյն կաթողիկէին եւ բարձրաբերձ դմբէթին... :

«Այստեղ հաշիւա բառը գոյծածուել է որպէս զարդանկարը շքեղանակ : Այսօր էլ Էջմիածնի տաճարի պահպանուած որմնանկարների մէջ տեսնում ենք հիմնական նկարը եզերող շքեղանակ-հաշիւաները» (28) :

«Ժաննակի զարդանկարներում (ակնարկութիւնը Վանի զարդանկարներու մասին է, Պ. Կ.) պահպանուել է արեւի նշանը՝ կազմուած չորս, հինգ, վեց, եօթ եւ աւելի «նորբերից» (մահիկածեւերից), ութ ոտմբածեւ (29) պսակաթերթերով ծաղիկը, որը նման է

26. Նոյնը, էջ 10 :

27. Նոյնը : Նոյնը եւ կարելի է ըսել վերջին երեք դարերու հայկական պղինձի համալէպ ցուցաբերուած գիտական հետաքրքրութեան մասին :

28. Նոյնը, էջ 10-11 : Հայկական պղնձեայ պնակներում, եւ մեծ ու փոքր սիւնակներում վրայ, այլազան ձեւերով առկայ է հաշիւան :

29. Ռումբածեւ = շեղանկիւն :

նաեւ աստղի (աստղ-ծաղիկ), կլոր վարդեակները, զանազան ոտմբա-
ձեւերը, եռանկիւնները, զիդ-դադ գծերը (Վանում կոչուում է ճակա-
ճիկո), ... եւ շատ ու շատ այլ երկրաչափական ձեւեր՝ բուսական
կենդանական ոճաւորուած մոթիֆներ» (30) :

Ուղեցիկնք երկար խօսիլ հայկական պղինձներու զարդանաշխե-
րուն, եւ հայկական զարդարարուեստի նուիրուած կարեւոր հրատա-
րակութեանց մասին, որոնք համարեայ նոյն կերպարները, նոյն ձե-
ւերը ուսումնասիրած են, եւ սերտ կապ ունին մեր նիւթին հետ :

Ասիկա ուղեցիկնք ընել պարզապէս ցոյց տալու համար կարեւո-
րութիւնը նիւթին հետ առնչուող աղբիւրներուն, առանց որուն կարե-
ւի պիտի չըլլար լրջօրէն դնահատել հայկական պղինձներուն հետա-
քըրքրական ու հարուստ նաշխադարդերը :

Ի վերջոյ, պղինձը, բացի աղղաղրական-կենցաղային նիւթա-
կան մշակոյթի իր արժէքէն, ունի նաեւ հայկական կիրառական զար-
դարուեստի հարուստ բովանդակութիւն, եւ որ տակաւին, դժբախ-
տաբար, պէտք եղած ուշադրութեան չէ արժանացած :

Մենք չենք խօսիր հայկական զարդարարուեստին՝ դրացի ժո-
ղովուրդներու զարդարուեստին հետ ունեցած աղբրսին մասին : Ասիկա
մեզ շատ հեռուները կրնայ տանիլ, եւ արդէն սերտողութեան առան-
ձին նիւթ մըն է :

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂԻՆՁԻ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ

Աշտանակ — մեծ, փոքր

Ախսէ — խոշոր, փոքր, խոր ոռքով, կամ սինի

Բաժակ

Գաւաթ

Գիւտէն, դիւտան կամ կաւաման

Դոյլ — խոշոր, փոքր, նեղ բերանով, լայն բերանով, կլոր,
կարճ, խիստ փոքրիկ

Զանդակ

Ըպրբի — ջրածիկ

Թանճիրէ — փոքր կամ միջակ սան

30. Ս. Դաքեան, *Հայկական Ժանեակը*, էջ 18: Հայկական ժանեակներու վրայ գտնուող զարդանաշխական այլ մոթիֆներու մասին տես՝ Ռոյնը, էջ 18-28, որոնք յաճախ կը բաւարարեն հայկական պղինձներու վրայ գտնուող եւ միեւնոյն դասին պատկանող զարդանաշխերը բացատրելու: Հայկական գորգերու վրայ օգտագործուած զարդանաշխական մոթիֆներու համար տես՝ Վ. Ս. Թեմուրբեան, *Գորգագործութիւնը Հայաստանում*, Երեւան, 1955:

Թաս — մեծ, փոքր, խորունկ, բաղնիքի թաս, խոշաֆի թաս,
 ձուկով թաս, կոթով թաս
 Իպրեխ լեկեն — ջրածիկ եւ տաշտ
 Լապտեր — ֆեններ
 Լեկեն
 Լենկերի — խոր մեծ բաց պնակ
 Խնկաման — տեսակաւոր
 Մնծղայ
 Կաթսայ — կափարիչով կամ առաց կափարիչի, խազան, բըռ-
 նիչով

Կացին

Կափարիչներ

Կիւկիւմ

Կղպանք

Կուժ

Կշիռք

Կնիք

Կոնք

Հեղուկի աման կամ չափ

Ճրագ

Մատուցարան (փոքր սինի)

Մասունքի տուփ (երկաթ)

Շերեփ

Պնակ — շատ են տեսակները

Ջրաման

Վահան

Տաշտ

Տապակ

Քամիչ — ֆեֆկիր, եւլն :

Հրատարակի վրայ տակաւին չունենալով դիտականօրէն պատ-
 րաստուած՝ պղնձեայ անօթներու յատուկ եւ դերմիքներով մշակուած
 առաջնորդող հրատարակութիւն մը, որուն միջոցով կարելի պիտի
 ըլլար որոշել ամէն պղինձի ու ձեւի մասնաւոր անունը, ստիպուած
 ենք գործածել բոլորին ծանօթ ու հասկնալի օտար բառեր, կամ՝ տալ
 անոնց սեռականը (générique) :

Օրինակ, պնակին՝ ընդհանուր առումով ըսած ենք պնակ կամ
 սեհեն. սակայն նկատի առած որ սեհենը մէկ քանի տասնեակներու
 հասնող ձեւերով ու մեծութեան չափերով առկայ է, կը փորձենք
 հասկնալի, բացատրողական բնութագրումներու դիմել, ինչպէս՝

Մեծ պնակ, փոքր պնակ, միջակ պնակ, ունկով պնակ, ոռքով

պնակ, միակտուր պնակ, բաց պնակ, դոյ խոր պնակ, ուղղաձիգ և զերքով պնակ, կափարիչով պնակ, հաւկթաձեւ պնակ, ձուլածոյ պրնակ, կարմրիս կամ դեղին պղինձով պնակ :

Նոյնն է պարագան թասերուն, սաներուն, ափսէ-սինիներուն, ջրամաններուն, եւլն :

Այս բոլորը անպայման որ ունեցեր են իրենց յատուկ բառամբերքը հայերէն լեզուին մէջ, սակայն այսօր դժուար է ճշգրտօղջիլ զանոնք, որովհետեւ անպայման որ բացի անոնց ձեւերէն, չափերէն ու մեծութիւններէն, անոնք ունեցած են իրենց դործածութեան իւրա-յատուկ եղանակները, տուներէն ներս կամ դուրս : Կային ամաններ, որոնք ամառը կը դործածէին, ուրիշներ՝ ձմեռը, կային ամաններ, որոնք կը դործածուէին տուներէն դուրս, հովիւներու կամ դաշտային մշակներու կողմէ : Կային մեծղի կաթսաներ, որոնց մէջ կ'եփէին խաչը, ուրիշներ, որոնց մէջ կը պատրաստէին մատաղի հերիսան : Կային պղինձներ, որոնք կը դործածուէին որպէս մաքուր ջուրի ըլ-տեմարան : Տակաւին կային եկեղեցական պղնձեայ քրոցներ, բուր-վառներ, խնկամաններ, մոմակալներ, դանդեր, մկրտութեան մեծ սաներ, եւլն : Եկեղեցական պղինձները բարերախտարար պահեր են իրենց հայերէն անուանակոչումները :

ՁԵՒԱՓՈՒՅՈՒՄԻ ԿԱՄ ԱՄԲՈՂՋԱՑՈՒԱԾ ՊՂԻՆՁՆԵՐ

Ինչպէս պատմական բոլոր տեսակի յուշարձանները, որոնք դարերու ընթացքին բնական պատահարներու, պատերազմներու, կործանումներու, կողոպուտի եւ այլ պատճառներով ունեցեր են աւերումներ ու վերակառուցումներ, վերանորոգումներ, ձեւափոխումներ, այնպէս ալ եղած է պղինձներու ճակատագիրը, ու կը շարունակուի մինչեւ մեր օրերը :

Մեր օրերուն, պղինձի ձեւափոխումները (հայկական կամ ոչ հայկական) տեղի կ'ունենան ընդհանրապէս արտադրական-չահակ-ցական կրկնակ դրդապատճառներով : Հինցած, անդամահատուած հին պղինձներու կոյտեր կը հաւաքուին, կը զատուին ու կը վերանորոգուին, կը զօղուին իրարու, կը կարկտնուին, կը ստանան նոր յատակներ, նոր կափարիչներ, նոր կանթեր, եւ փոխադարձաբար՝ հին կափարիչներուն կը յարմարցնեն նոր պնակներ : Երբեմն այդ հինցած պղինձները կը ստանան որձեւէզ ձեւեր, կ'ունենան յաւելումներ, կամ կը կիսուին, կը կրկնապատկուին, կը զարդարուին նոր նաշխերով, կը ստանան դրուագումի եւ դրոշմի նոր ձեւեր, ու զարդեր : Այսպիսով՝ անօթը կամ անօթները կ'այլափոխուին ու կը կորսնցնեն իրենց նախկին ձեւն ու բնոյթը, ինչպէս նաեւ դործածութեան պաշտօնը : Պատճառը այն է որ Մերձաւոր Արեւելք այցելող օտար զբօսաշրջիկը,

որ եկած է հեքիաթային արեւելքի հազար ու մէկ զիշերներու հմայ-
քովը տարուած, անպայման որ իր շրջապտոյտէն վերադարձին իր
հետ պիտի ասնի իրեն համար նորութիւն եղող յուշանուէրներ: Կը
դնէ ինչ որ իրեն համար տարօրինակ է, կամ տեսքով հաճելի: Ամէն
եկող հնարան չէ, կարենալ ստուգելու համար հինը նորէն, ձեւա-
փոխուածը՝ իրականէն: Նիւթապէս անհնարին է այս բոլոր յաւելում-
ներն ու կրճատումները երեւան հանել, եւ արդէն շատերուն համար
ասիկա խնդրոյ առարկայ իսկ չի կրնար ըլլալ: Այս է պատճառը որ
երբեմն հայկական պղինձներն ալ ենթարկուած են «վիրարութական»
ձեւափոխումներու:

Ամենէն շատ տարածուած աւերումը այն է որ օտարը կլայեկ-
ուած որեւէ պղինձ չի դներ, ան՝ անխորժ, թմբած դոյն մը ունի:
Պէտք է պղինձը իր իսկական գորշ, կարմրաուռն գոյնով ներկայաց-
ուի, շատ լաւ փայլեցուած, որպէսզի copper բայով: Այս պատ-
ճառով քանի մը դար հնութիւն ունեցող, երբեմն շատ դեղեցիկ պը-
ղինձներ, մանաւանդ ափսէներ, կը մերկացուին իրենց հաղուտէն,
այսինքն՝ անագէն, ու կը ստանան իրենց պղինձի գոյնը:

Պօսինք օրինակներով:

Մեր հաւաքածոյին մէջ ունինք տպաւորիչ տեսքով վահան մը,
որ նախապէս եղած է ուղղաձիգ նեղ եզրով մեծ սանի մը կափարիչը,
եւ կամ՝ մեծ պնակ մը: Վաճառականը կամ պղնձագործը նկատելով
որ պարզ կափարիչ մը երբեք ուշադրութեան պիտի չարժանանայ,
կ'որոշէ զայն վահանի վերածել, նկատելով անոր վահանաձեւ բայով:
Ուրեմն՝ պնակին տակի ուռած կողմին, հաւասար հեռաւորութիւննե-
րով հինգ մեծ ծակեր ծակել կու տայ: Այդ հինգ ծակերուն գամել
կու տայ հինգ աստղաձեւ դեղին թափծու մեծ գամեր, որով, պնակին
տուած կ'ըլլայ կատարեալ վահանի մը տպաւորութիւնը: Իսկ պնակի
խոռոջաւոր հակառակ կողմին շինել կու տայ թաղիքէ յատակ, որուն
վրայ կ'աւելցնէ կաշիէ կլոր բարձ մը, եւ երկու ոլորուն կաշիէ թե-
ւանցքներ, վահանին միացած մետաղեայ օղակներով:

Եթէ չըլլար պնակի վրայի փակագրեալ եւ բոլորակի մը շրջա-
նակուած հայերէն արձանագրութիւնը, հաւանաբար մենք եւս պիտի
չկարենայինք նկատել անոր ձեւափոխումը: Արդէն ծախողն ալ հաւա-
տացած էր անոր վահան մը ըլլալուն, եւ այդ պատճառով իսկ պնակի
մը գինէն տասնապատիկ աւելի սուղ դին վճարել տուաւ մեզի:

Մեր հաւաքածոյին մէջ կը դտնուի նախկին վանքապատկան
դաւազանակիր մոմակալի մը ուղղաձիգ եզրեր ունեցող փոքր պնակ
մը: Մոմակալի այս պնակը, որ նախապէս պատկանած է Արմաշու վան-
քին, վանքէն դուրս հանուելէն ետք, նոր տէրը զայն վերածեր է ջուր
խմելու թասի, կեղրոնին դաւազանը ընկալող բացուածքը գոցելով
պղնձեայ բոլորակ մասով մը:

Տակաւին ունինք կափարիչով պնակներ, որոնց կափարիչները կորսուեր են, եւ որոնք փոխարինուեր են նոր կափարիչներով: Ունինք ճաշամաններ (սեֆեր թաս), մի քանի յարկանի, որոնց յարկերէն մէկը կամ երկուքը փոխուեր են: Ունինք կաղամարներ (տիւլիտ), որոնց կամ զրչատուփի կափարիչը, կամ յատակը, եւ կամ եղեղեայ զրիչները ընկալող խողովակին կափարիչները փոխուած են նորերով: Մենք կարեւորութիւն չենք տուած այդ կարկտուքներուն, որովհետեւ մեր փնտածը ոչ թէ կափարիչն է, այլ արձանադրութիւնը:

ԵՕԹԸ ՀԱՐԻՒՐԷՆ ՄԵԿԸ

Ինչ կրնայ ներկայացնել մեր այս 700 կտորներէ բաղկացած յղինձներէն ամէն մէկը՝ առանձին առանձին առած: Ամէն յղինձ ունի իր ողիտականը, ունի իր հետաքրքրական կամ ողբերգական պատմութիւնը: Որպէս օրինակ կը ներկայացնենք անոնցմէ մէկը՝ Տ. Տ. Գարրիէլ Ստոյ կաթողիկոսին պատկանող լենկերը (տես՝ էջ 218 նըկար թիւ 17):

Պղնձեայ պնակն ունի 45 սմ. տրամագիծ, 28 սմ. յատակով: Ամբողջ եզերքը, բոլորակի (որուն լայնքը՝ 8.5 սմ. է) զարդարուած է այլազան ձեւեր ունեցող ոճաւոր բուսական մոթիֆներով, եւ որուն ճայրամասին, ունի հետեւեալ խորագիր յիշատակութիւնը՝ մասամբ կրճատեալ, մասամբ փակազրեալ.

Յիշատակ է լէնկերս Տէր Գարրիէլ Կաթողիկոսին, ի Դուռն Սուրբ Լուսաւորչա Արքուդյն, Թիւի. ՌՄԺ (1761):

Պահպանութեան, պիճակի. — Տրորուած, եօթը տեղերէ ճեղքուած, յատակը պերանորոգուած ու կրկին լամնուած եզերքէն:

Տառնամեակներ առաջ անտիոքարնակ այեուի արարի մը քովէն դնեցի այս բազմաչարչար մեծ պնակը, որ որպէս յղինձ ծախուելու սահմանուած էր: Տարի տուն, մաքրեցի, քիչ մը շտկրտեցի ու սկսայ անոր լինթութեան թուղթը պատրաստել: Որքան մեծ եղաւ ուրախութիւնս, երբ յայտնի եղաւ որ այս տրորուած լենկերը նահատակուած հայրապետի մը ընծայարբերուած մէկ յիշատակը եղած է:

Ծանօթ չէի այս անունին: Կարդացի Ալիշան, Օրմանեան, Կիւլէսէրեան, եւ լիովին ծանօթացայ այս կաթողիկոսին ու անոր տոհմակիցներուն:

Գարրիէլ կթղ. եղած է Ստոյ Ս. Աթոռին Աջապահաններու դարմէն սերած երրորդ կաթողիկոսը: Իր երկու եղբայրներն ալ՝ Ղուկաս եւ Միքայէլ, իրմէ առաջ, նոյնպէս պահակալած են Ստոյ Աթոռին: Երբ աւարտեցի աղնուական ու հայրենասէր այս ազգատոհմէն

սերած հայրապետներու պատմութիւնը, ինծի համար անծանօթ մը-
նացած նոր աշխարհ մը յայտնարբերուեցաւ: Հայակիլիկեան աշխար-
հը, հարուստ վերիվայրումներով: Հերոսականին քով՝ ողբերգակա-
նը, լոյսին դէմ՝ խաւարը, անորոշութեան դէմ յոյսն ու հաւատքը,
դամոկլեան սուրբերուն դէմ՝ դոյատեւման տենչն ու պայքարը:

Աջապահեան տոհմի մասին գրած է Եփրեմ կաթողիկոս, որ
Մարկոս քահանայի որդին էր, եւ Աջապահեան առաջին երեք կաթո-
ղիկոսներուն՝ Ղուկասի, Միքայէլի ու Գարբէէլի հօրեղբորորդին:
Բացի Եփրեմի՝ Աջապահեաններու տոհմագրական տուեալներէն,
տակաւին ուրիշ վաւերական կարեւոր աղբիւրներու ծանօթ չենք:
Մէկ բան սակայն խիստ որոշ է որ Աջապահեան կաթողիկոսներու
պապերը եղած են Սուրբ Աջերու եւ ուրիշ նշխարներու հսկիչները,
պահակները: Ժողովուրդը՝ աւանդապահ այդ սերունդին զարմերը
ճանչցեր է որպէս աջապահներ, որմէ՝ Աջապահեան տոհմանունը:

Աջերու պահպանութեան այդ կարեւոր պաշտօնը նոյն տոհմի
անդամներուն մէջ անցած է սերունդէ սերունդ, հասած Գարբէէլի
հօր՝ «Աջապահ Տէր Յուսիկին»:

Ռուբինեան Թագաւորութեան անկումէն մինչեւ Եփրեմ կաթո-
ղիկոսի եղբրական վախճանը, քանի քանի անդամներ խաթամուժը
ասպատակած է երկիր եւ վանք, հրդեհած, կողոպտած, քանդած,
գերած ու սուրէ անցուցած է Հայակիլիկիոյ ժողովուրդը անխոր:
Եւ այդ դոհուրոհին մէջ զարմանալի չէ որ իր ամբողջութեանը մէջ
չէ արձանագրուած Աջապահեան տոհմի պատմութիւնը:

Եթէ միայն Տէր Յուսիկ Աջապահ քահանայի շրջանէն մինչեւ
Թէոդորոս կթղ.ին յիսնամեայ ժամանակաշրջանը նկատի ունենանք,
պիտի զարհուրինք դոյալիճակէն, որուն Թատերաբեմը հանդիսացած
է Սիւ մայրաքաղաքն ու կաթողիկոսանիստ վանքը, որպէս դերակա-
տարներ ունենալով մէկ կողմէ այլացեղ բարբարոսներու բանակը,
միւս կողմէ՝ հոգեւորականներով միասին անտէր ու անտիրական
մնացած ժողովուրդ մը:

Օրմանեան պատրիարք Գարբէէլ կթղ.ի մասին խօսելով կ'ըսէ.
«Գարբէէլի գործունէութենէն բան մը պիտի չկարենանք գրել առձեռն
տեղեկութիւններ պակսելուն համար, բայց նշանաւոր արդիւնք մըն
ալ ունեցած է երեւիք, զի ունենալու ալ դիւրութիւն չունէր՝ ընկճուած
ըլլալով Գօզանօղլուներու տեղական բռնապետութեան ներքեւ: Նոյ-
նիսկ Գարբէէլի կեանքը զոհուեցաւ այդ բռնութեանց, վասնզի Սոյ
վանքին վրայ խուժող լեռնականները, զորս արիւնքուշտ գազանի
կը կոչէ յիշատակագիրը, կաթողիկոսին ալ չխնայեցին, եւ զարկին
սպաննեցին 1770 սեպտեմբեր 10-ին, Սաչի շաբաթապահքին ուրբաթ
օրը: Միւս օրը, շաբաթ առտուն, հազիւ թէ վանքին մէջ եղողներ՝
սպանեալ կաթողիկոսը Թաղեցին ի դիրս համգստեամբ, ահա նոր յար-

ձակում մը կրեց Սոոյ վանքը Գօզանօղլուի անսանձ վնասակներէն, որովք գայս ինչ պահանջելով կամ գայն, միարաններ կը խոշտանգէին եւ կը կոշկոճէին, այնպէս որ ոչ պակաս քան զաւուրս տասն, խեղճ միաբաններ շուարած էին մահու ակնկալեալ քան կեմաց» (31) :

Գարբիէլ կթղ.ի դամբանաքարը չէ դտնուած, թէեւ Սոոյ վանքին մէջ միւս կոթողիկոսներուն արձանագիրները կան, ինչպէս Ղուկաս կթղ.ին, որ «Հանդաւ մեծ թվին ՌՃՁՁ», Միքայէլ կթղ.ին որ վախճանած է Ռ եւ երկու ը եւ է Հանգստիւ ի Տէր Հանդեալ» : Ունինք թէոդորոս կթղ.ի արձանագիրը. ան վախճանած է 1791 թ.ին : Աջապահանները Սոոյ աթոռին տուած են վեց կաթողիկոսներ, եւ որոնց վերջին ներկայացուցիչը եղաւ ամբասիր ու բարի Պաղ Արք. Աջապահան :

Այժմ աւելի քան երկու հարիւր տարիներ կը բաժնեն մեզ Գարբիէլ կթղ.ի օրերէն... նահատակուած հայրապետէն միակ շօշափելի յիշատակն է որ այժմ կը գտնուի կենդանի, սրբազան մասունք մը, պղնձեայ պնակ մը... :

ՎԱՍՆ ՎԵՐՔԱՐԱՆՆԻ

Եթէ օր մը ամբողջութեամբ հրատարակուին բոլոր դարերուն եւ ամէն տեսակի պատկանող հայկական պղինձները, անպայման որ հայ մարդը պիտի դնահատէ ու պիտի սիրէ իր սրտին այնքան մօտիկ այս յուշարձանները, որպէս իր նախնիքներէն ժառանգուած նշխարներ :

Դուրիսի պեղումներէն յայտնաբերուած դաւաթներու մասին ասան թէ ինչպիսի ոգեշունչ տողեր ձօնած է Յ. Յովնաթան.

«Դաւաթներ էլ են ելնում, որոնցմով մեր մեծերը գինի են խըմել : Բարի արեւ են ցանկացել իրենց ու իրենց աշխարհին : Եւ միշտ բարի է եղել մեր արեւը : Եւ օրհնուած է եղել մեր հողը : Եւ հիմա մէկիկ մէկիկ յարութիւն են առնում մեր նախնեաց կեանքի եւ դործի վկաները...» (32) :

Մեր հաւաքածոյի պատմական խորքէն հանդէս կու դայ քրքրանալան հայ ժողովուրդը իր շինականով, արհեստաւորով, մամիկներով, հարսերով, իր մահտեսի դարձած ուխտաւորներով, մեծով ու պղտիկով : Տակաւին այս հաւաքածոյին մէջ այնպիսի սիրելի իրեր կան, որոնք մեզի հասած են Տէր-Չօրի անապատներէն, ջարդերէն ու

31. Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, Մասն Բ., Կ. Պոլիս, 1914, սիւնակ 3071 : Նաեւ տես՝ Լ. Ղ. Ալիշան, Միտուան, Վեմետիկ, 1885, էջ 219, ծան. 1 :

32. Յարութիւն Յովնաթան, Պատմական Դուրիսը եւ Նրա Պեղումները, «Հայրենիքի Ձայն», 1970, քիւ 30, էջ 4 :

աքսորէն ետք: Նշխարներ, որոնց տէրերը եղած են մեր անմիջական սերունդին հայրերն ու մայրերը, որոնք իրենց զոզգոթայի ճամբուն վրայ ինկած են, որպէս հատուցում, հարստութիւն ունենալով միայն սալուր մը, փոքր պնակ մը, թաս մը, կամ դոյլ մը, առարկաներ, որոնք ձգած են այն ճամբաներուն վրայ, որոնց վրայ քալած ու ինկած են անօթի:

Մնացորդացին մնացորդաց այդ իրերը, այնքան ալ պարզ ու աննշան իրեր չեն եղած երբեք հայ մարդուն համար: Պղինձի պատմութիւնն ալ իր պատկանած ժողովուրդին պատմութեան կը նմանի, ու անոր հետ համընթաց կ'ընթանայ:

ՆԿԱՐՆԵՐՈՒ ՑԱՆԿ

- Տախտակ թիւ 1. Հայկական պղինձներու վրայ տեսնուող փակադիրք:
- Տախտակ թիւ 2. Հայ պղնձագործ վարպետներու յատուկ նշաններ:
- Նկար թիւ 1. Պղնձեայ կոփածոյ անօթներու ոտքի կեղզոնին վրայ հայ վարպետներու թողուցած զարդաձևեր (մատիտով նմանահանուած):
- Նկար թիւ 2. Թանի թաս: Արձանագրութիւն՝ Գիրիշնի Օղլու Միի (Մահաեսի) Արուքիւն:
Հաւաքածոյ՝ Պերճ Կարապետեանի:
- Նկար թիւ 3. Նկար թիւ 2-ի մանրամաս:
- Նկար թիւ 4. Զեռք լուալու փոքր տաշտ: Ոճը պարսկական է: Արտակարգ դեղեցկութեամբ նաշխազարդուած՝ բուսական եւ կենդանական մոթիֆներով:
Հաւաքածոյ՝ Վահէ Սէթեանի: 1976-1977 թթ.ու կռիւներու ընթացքին թալանուած:
- Նկար թիւ 5. Նոյնը՝ նկար թիւ 4:
- Նկար թիւ 6. Նկար թիւ 4-ի մանրամաս (մատիտով նմանահանուած):
- Նկար թիւ 7. Պատուանդանով միակուր սինի սեղան: Արձանագրութիւն՝ Յիշատակ է Սուրբ Երուսաղիմայ Արուքիւն: Իր տեսակին մէջ մէկ հատիկ է որպէս Ֆորմ: Գեղեցիկ նաշխազարդեր:
Հաւաքածոյ՝ Վ. Սէթեանի, 1976-1977 թթ.ու կռիւներու ընթացքին թալանուած:
- Նկար թիւ 8. Քիլտան - Գիլտան, կամ կաւաման: Արձանագրութիւն՝ Ի վայելուամն Պողոսիւն է ԹՎ. ՌՃԼԸ (1689):
Հաւաքածոյ՝ Վ. Սէթեանի: Խիստ ընտիր նմոյշ: 1976-1977 թթ.ու կռիւներու ընթացքին թալանուած:
- Նկար թիւ 9. Լայնկզր ախէ:
Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի:

- Նկար թիւ 10. Նկար թիւ 9-ի կեդրոնի զարդը (մատիտով նմանահանուած) :
- Նկար թիւ 11. Նկար թիւ 9-ի արձանադրութիւնը :
- Նկար թիւ 12. Փոքր ափսէի մը շրջանակուած արձանադրութիւն՝ Եւն Կիպար. ԹՎ. ՌՃԶԸ (1739) :
- Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 13. Լոյսեղբ խոշոր պնակ : Արձանադրութիւն՝ Սարգիս որդի Մուրատիմ : Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 14. Փոքր նաշխուռն պնակ : Արձանադրութիւն՝ Մանուկ որդի Կարապետիմ : Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 15. Խոշոր ափսէ, 105 սմ. տրամադիծով : Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 16. Նկար թիւ 15-ի կեդրոնի զարդը (մատիտով նմանահանուած) :
- Նկար թիւ 17. Կիլիկիոյ Գարբիէլ Աջապահեան Կթղ.ին նուիրուած լինկերը (բաց խոշոր պնակ) : Յատակը նորոգուած : Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 18. Մրդաթանի սիթիլ (դոյլ) : Արձանադրութիւն՝ Սարգիս Օզիլ Է-րէմիեայ, 1206 ՀՏ. (1791-1792 թթ.) :
- Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 19. Նկար թիւ 18-ի մանրամաս :
- Նկար թիւ 20. Տունի ղեկաման? - Արձանադրութիւն՝ Միքիչան, ԹՎ. ՌՂԳ. (1644) :
- Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 21. Նկար թիւ 20-ի մանրամաս :
- Նկար թիւ 22. Զրածիկ (ըզբրի) : Արձանադրութիւն՝ Մղսեսի Խաչատուրիմ, ԹՎ. ՌՃԼ. (1681) :
- Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի : Հալէպի շրջանէն շրջած հորէ մը հանուած և և ճերմակ կորկով պատած : Արտակարգ նրբութեամբ բանուած :
- Նկար թիւ 23. Կենցաղային իրեր : Ափսէ՝ վրան պղնձեայ նաշխուռն ալյաղան դաւաթներ : Ընդհանրապէս Ուրֆայի դործ : Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 24. Սիրուն, կլոր և բրդածեւ կախարիչով աման, որ կը դործածուէր՝ բէջէլներու կամ մրդաթանի, փալուզայի համար : Արձանադրութիւնը խորաղբ է՝ Յիշատակ է Դոկիու (Եւզոկիոյ) Դէտ Յակոբ վարդապետիմ Նրուսաղէմայ, Սուրբ Յակոբայ Աթոռիմ ձեռամբ Սարգիս վարդապետիմ, թՎ. ՌՄԼԸ, (1789) :
- Հաւաքածոյ՝ Վ. Սէթեանի, կողոպտուած :
- Նկար թիւ 25. Կենցաղային իրեր : Երկու, երեք, չորս յարկանոց շուկայի կամ դըզ-բոցի համար պատրաստուած ճաշամաններ : Հաւաքածոյ՝ Պ. Կարապետեանի :
- Նկար թիւ 26. Կենցաղային իրեր : Զախէն աջ՝ զղակածեւ բաղնիքի թաս, հինգ ալ-լաղան ձեւերով ու չափերով բաղնիքի թասեր, որոնցմէ երկուքը

- իւր կրեան շարժումն ձուկեր, դղակածեւ բաղնիքի թաս: Առաջին շարժի երկու կողմերուն՝ բաղնիքի արկղիկներ, ծակրտկէն յատակով, որուն մէջ կը դրուէր օճառը, լիճը, քէսէն, եւ անուշահոտ իւղեր: Հաւաքածոյ՝ Գ. Կարապետեանի:
- Նկար թիւ 27. Կենցաղային իրեր: Ձախէն աջ՝ կափարէշով մրդաթանի փոքր դոյրեր: Առաջինը կրնայ նաեւ փոքր խաղալիք ըլլալ: Անթէպեան խիստ ընտիր պնակ, սրճեփի ջրածիկ, մրդաթանի կափարէշով մեծ դոյլ: Հաւաքածոյ՝ Գ. Կարապետեանի:
- Նկար թիւ 28. Կենցաղային իրեր: Ձախէն աջ՝ իւղաման, պտուղի կամ հացի ափսէ, քամիչ, շերեփ, սան: Վարի կարգին վրայ՝ ապուրի թաս, տակը փոքր ափսէ, կերակուրի փոքր լէկէն, ջուրի կամ դինի խմելու շերեփ: Հաւաքածոյ՝ Գ. Կարապետեանի:
- Նկար թիւ 29. Կենցաղային իրեր: Ձախէն աջ՝ անուշիղէնի դոց-կլորր աման, ձեռքով ջրաման, իւղաման՝ առաստաղի կախիչով, հեղուկներ լեցընող չափ կամ աման, կիւկիւմի տեսակ, սկէն ջուր փոխադրելու ծառայող: Հաւաքածոյ՝ Գ. Կարապետեանի:

THE ARMENIAN COPPER, 1600 - 1915

BERDJ GARABEDIAN

(Summary)

The Armenian copper-smiths' trade has started to grow in the cities of Armenia from 9th century on. Armenian copper-smiths had their patronizing saints, their special workshop quarters in the cities, their syndicates, even their own flags. The Armenian coppers with their inscriptions and embroideries express one of the best features of Armenian art, and are rare documents of Armenian history and culture.

The article deals with Armenian copper of 1600 - 1915, which have reached us mostly from the cities of Armenia and Cilicia.